նութեամբ զինուորայ իմոց պահանջեցից։ Յայսմ վայրի դատաւորքն անեն-թադատք՝ բարդեալք ի վերայ իմ զղուռուչս հազարս, ոչ առ չքաւորութեանս և ոչ յաւարումն գոյիցս նկատելով, յերկրորդումն աւուր առաքեցին առ իս զվճիռ գնահատութեանն, ծանուցանելով զանդանդաղ հատուցման հարկաւորութիւն։ Իբրև տեղեկացայ զիրէն և զմտաւ ածի զանկարելութիւն հատուցման, զոլով թափուր յամենայնէ զոր ունէի (թէ և սակաւ), ևս զվտանգն որ ի վերայ կայր՝ անկանելոյ ի ձեռս հերետիկոսաց, խուսել խորհեցայ առ ժամանակ մի. բայց զի ոչ գրաստ գտանիւր, և ոչ թէ և գտանիցիւր՝ ունէի զդրամ վարձու, բաց ի 14 զլօթայից Լեհաց, որ պակաս քան զերկուս զուռուչս լինէր, եզերեցի յինքեան՝ հետի խուսիլ ի տեղւոջէն, թէ և տկար և ծեր։

10. — Ի չորեքշաբաթոջ զոմանս իրս զորս տակաւին ընդ իս ունէի, առաքեցի առ Տ. Ստեփաննոս քահանայ Ս. Խաչին, ի պահեստ, և զգրեանս թողի առ Հարս Վարժարանին. որոց և յայտնեցի զխորհուրդ գնալոյս զանխուլ, բայց ոչ զուրն. և յանձնեալ զմանուկն իմ Նոցա, երեկոյին պատճառեցի գնալ ի զնին ՁԼասու վանացն, առեալ ընդ իս զխահարարն իմ և զերիս նկանակս հացի։ Եւ տեսեալ զդրունս բնակութեանն քարաշինի խորտակեցեալս, ի ներքս զանօթս ապակեղէնս փշրեցեալս, և ի յատակ տանն ցրուեցեալս զսեղանս, և զառորմունս կոտրատեցեալս, ոչ հմարձակեցայ անդէն ագանիլ, այլ գնացի ի տուն խահանոցին, յայսմ ամի յինէն նորոգեցեալն, և գտի զդրունս նորա ամբողջս։ Եւ անդէն գերծեալ զմօրուսս, և թեթևացուցեալ զհերս զլխոյս, առ ի չճանաչելոյ յումեքէ դիւրակի, օթեցի անդէն. բայց մեծաւ երկիւղիւ ի Սվէտաց, շուրջանակի բնակողաց. այս է ի վանս Ռուսաց, ի գերդաստանի Իուշքէվիցին, Իուրքէվիցին, և Սթէցքէվիցին. գուցէ ի գիշերի կամ ըմբռնիցէին կամ սպանանիցէին, և լինեցէի ինքնս ինքեան մահուան պատճառ։ Ուստի յոյժ մեծատաժան գիշեր եղև այն ինձ, և բնաւին ընդ բոլոր ցայգն՝ կուք մի ոչ անկաւ յաչս. նախ, ի կասկածանաց թշնամեաց, որպէս ասացի. երկրորդ յանսուաղութենէ, զի ի տկարութենէ անցելոց աւուրցն, և ի մտատանջմանէ՝ դոյն ինչ ճաշեցի, և յերեկոյին զոչինչ. երրորդ, յանբաւութենէ լուոց, զորս թողեալք էին ի տեղւոջն՝ ողորմելիքն շինականք, որք նախ քան զգալն Սվէտաց փախուցեալք բնակէին անդ իմով թոյլատրութեամբ, և ի գալ թշնամեաց՝ վերստին յայլուր թագուցեալք էին։ Այսց ուրեմն պատճառաց վասն ամենամեծ տագնապաւ ոգւոյ, և մարմնոյ անհանգստութեամբ՝ տապեցա մինչեւ ցերկրորդ հաւախօսն։ Վերայաւելաւ սոցին եւս տարակոյս, զի բաց յ՚անցելոյ աւուր անձրեւոյն՝ յայնմ գիշերի ոչ դադարեաց անձրեւել. և ես ոչ զկոշիկ և ոչ զտրեխ իսկ ունէի, այլ զհանապազորդեան հողաթափն ևեթ, որով ելի ի դպրատանէ անտի. և թվիւր ինձ անհնարին՝ այնու գնալ զառաջիկայ ճանապարհն չաղախային, եթէ ոչ բոկոտն։

11. Ուրեմն, ի հինգշաբաթոջ յերկրորդում հաւախօսին՝ թէ և մթնագի-